ՄՇԱԿՈՒՅԹ

ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԸ ՄԻԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՆԳԱՌ» ԾՐԱԳՐԻՆ

Հունիսի 18-24-ը Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը կներկայանա Հայաստանի մի շարք քաղաքներում:

Թե ինչ բեմադրությամբ եւ Հայաստանի որ քաղաքներում է ներկայանալու թատրոնը, մեզ հետ զրույցում թատրոնի գեղարվեստական ղեկավար Ա.Բայանդուրյանը «Վրաստան» թերթին մանրամասնեց.

- Վիրահայոց թատրոնը, որպես արտերկրի միակ պետական հայկական թատրոն, միանում է Հայաստանում մշակույթի նախարարության նախաձեռնությամբ առաջին անգամ մեկնարկած «Մշակութային կանգառ» ծրագրին: Ծրագրի շրջանակում, Հայաստանի եւ Արցախի 94 համայնքներում, կիրականացվեն թատերահամերգային ծրագրեր, ցուցահանդեսներ, կինոցուցադրություններ: Միջոցառման գլխավոր հովանավորը մարդկային ռեսուրսների «Փյունիկ» հիմնադրամն է:

Հյուրախաղային մեր ծրագիրը բացում ենք Սանդլաժի «Օրը՝ անձրեւոտ...» (բեմ.՝ Ա.Բայանդուրյանի) ներկայացումով: Պրեմիերան, որի հանձնումը կկայանա օրերս մեր թատրոնում, ահազանգում է ոգելից խմիչքը չարաշահող եւ այդով իրենց անդունդը գլորող մարդկանց ճակատագիրը: Ներկայացման մեջ ներգրավված են մեր թատրոնի ինը դերասանները՝ Դավիթ Բարսեղյանը, Արթուր Գասպարյանը, Էդուարդ Մուրադյանը, Աշոտ Սիմոնյանը, Ֆելիքս Խաչատրյանը, Նարեկ Բայանդուրյանը, Գագիկ Մելքումյանը, Նանո Պողոսյանը եւ Լյուբա Սահակյանը:

Հունիսի 18-ին հանդես կգանք Սպիտակի Մշակույթի տանը, հունիսի 19-ին՝ Դիլիջանի Հաղարծին գյուղի Մշակույթի տանը, հունիսի 20-ին՝ Գյումրիի Վ.Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, հունիսի 21-ին՝ Ստեփանավանի Ա.Մարգարյանի անվան Մշակույթի տանը, հունիսի 22-ին՝ Իջեւանի Մշակույթի տանը, հունիսի 23-ին՝ Վանաձորի Հ.Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, հունիսի 24-ին՝ Ալավերդիի Մշակույթի տանը:

Ինչ վերաբերում է ադամյանցիների հյուրախաղային ծրագրի ամառային ընթացքին, ապա հուլիս եւ սեպտեմբեր ամիսներին թատրոնը կմասնակցի Միջազգային թատերական փառատոներին Հունաստանի Կատերինե եւ Բելառուսի Բրեստ քաղաքներում: Ասենք նաեւ, որ մինչ այդ, թատրոնը իր ներկայացումներով հանդես կգա Վրաստանի մի շարք մունիցիպալիտետներում:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ՀՈՒՆԻՍԻ 1-Ը՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

ՈՒՐԱԽ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ, ԾԱՓ ՈՒ ԾԻԾԱՂՈՎ

Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ 1 հանրային հայկական դպրոցում, երիտասարդ ուսուցչուհի Խանում Ավանյանի եւ վրաց լեզվի ուսուցչուհի Նինո Զաքարիածեի համատեղ ջանքերով, կազմակերպվել էր երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված հետաքրքիր միջոցառում:

Վրացերեն եւ հայերեն ասմունքով, երգով ու պարով, հումորով ու ծիծաղաշարժ դերերով միջոցառման մասնակիցները շատ ուրախ պահեր, հաճելի անակնկալներ եւ բարձր տրամադրություն պարգեւեցին հավաքվածներին, դպրոցի աշակերտներին, ուսուցիչներին, ծնողներին:

Միջոցառման մի մասն էր կազմում նկար-ցուցահանդեսը՝ մանուկների հեքիաթային աշխարհը, որտեղ յուրաքանչյուր մասնակից յուրովի էր ներկայացել իր պատկերացումներն ու ցանկություններն աշխարհի մասին: Ամենահաջողվածը, ինչպես նշեց Ժյուրին, առաջին դասարանցի Արփիհե Պառավյանի աշխատանքն էր, որի համար նա դպրոցի կողմից ստացավ պատվոգիր ու նվեր: Իսկ իններորդ դասարանի մի խումբ աշակերտներ՝ հեքիաթային կերպարների համազգեստներով շրջում էին, շնորհավորում բոլորին եւ նվիրում բացիկներ, ինչպես նաեւ պարեցին ժամանակակից «Ֆլեշմոբ» պարը: Տիրում էր ուրախ տրամադրություն, ծափ ու ծիծաղ: Եվ թվում էր, թե աշակերտների այդ տրամադրությունը հարատեւելու է, բայց... ազդարարվեց միջոցառման ավարտը, եւ դպրոցի տնօրեն Արտուշ Ուռումյանը շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին եւ միջոցառման մասնակիցներին՝ խոստանալով աջակցել ամեն տարի նույն շուքով նշելու այդ օրը:

Թող միշտ պաշտպանված, անհոգ, ուրախ եւ երջանիկ լինեն համայն աշխարհի երեխաները: Թող նրանց աչքերը չարցունքոտվեն եւ իրականան նրանց նվիրական երազանքներն ու ցանկությունները, ինչպես իրենց նկարած նկարներում եւ հրաշք հեքիաթներում:

ՆԵԼԼԻ ՉՈԲԱՆՅԱՆ
Հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ԱՅԴ ՕՐԸ ԿՈՒԼԻԿԱՄՈՒՄ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԷՐ ԱՄԵՆ ԻՆՉ

Ախալքալաքիի մունիցիպալիտետի Կուլիկամի հանրային դպրոցում նշվեց երեխաների պաշտպանության միջազգային օրը: Դպրոցի ուսումնական ծրագրով նախատեսված այդ միջոցառումը հեքիաթի էր վերածվել կազմակերպիչ ուսուցչուհի Տաթեւիկ Կոբելյանի նախաձեռնությամբ, որին աջակցել էին ուսուցչուհիներ Նադյա Մարաբյանը եւ Հերիքնազ Քոսյանը:

Դպրոցի դահլիճը նմանվել էր մի հրաշք բնապատկերի՝ իր կանաչով եւ գեղեցիկ գունավոր ծաղիկներով ու կենդանիներով:

Արտասովոր էր ամեն ինչ, եւ ահա վերջիվերջո սկսվեց «Փոքրերի աշխարհ» խորագրով միջոցառումը, որի տաղավարը պարունակեց բազմաթիվ անակնկալներ: Հայտնվեց ամենափոքրիկներից Ամենագետիկը՝ իր բացառիկ ունակություններով, մյուս փոքրիկներն իրենց զվարճալի կատակներով ու ծիծաղով լցրեցին ողջ դահլիճը: Ապա խոհանոցի հաղորդումն էր. երեխաները պատրաստել էին համեղ ուտեստներ: Մուլտերի աշխարհից հյուրընկալվել էին Օլե Լուկոյեն, Մոխրոտիկը, Բանտիտոները, Մերի Փոպպինսը, Պեպին, Մալվինան եւ Պիերոն, Պույ-պույ մկնիկը, Կարմիր գլխարկը, Բուրատինոն եւ, իհարկե, Սպիտակաձյունիկն՝ իր յոթ թզուկների հետ եւ շատ ուրիշ հերոսներ:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ աշակերտներին շնորհավորանքի եւ բարեմաղթանքի խոսքեր հղեց դպրոցի տնօրեն Արմինե Ուզունյանը:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ

...ՈՐ ԷԼ ԱՎԵԼԻ ԽՈՐԱՆԱ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 1-ին, Ախալքալաքիի մունիցիպալիտետի Դիլիսկա գյուղի հանրային դպրոցում, անցկացվեց միջոցառում՝ նվիրված վրաց-հայկական բարեկամությանը:

Աշակերտները ներկայացրին հայ եւ վրաց գրական ստեղծագործություններ, երգեր ու պարեր:

Միջոցառումը կազմակերպվել էր «Որտե՞ղ կա մեկ այլ Վրաստան» ծրագրի շրջանակներում: Ծրագրի հեղինակը դպրոցի վրաց լեզվի ուսուցչուհի Իամզե Մսխվիլիձեն է: Ինչպես ինքն է ասում, միջոցառման նպատակը երկու ազգերի գրականությունները երեխաներին ծանոթացնելն ու հայերի եւ վրացիների միջեւ բարեկամական հարաբերությունների էլ ավելի խորացումն է:

- Դիլիսկայի դպրոցում արդեն որերորդ տարին է, ինչ մեծ հաճույքով դասավանդում եմ վրաց լեզու: Սկզբում նպատակս մեկն էր՝ երեխաները կարողանային հնարավորիս հեշտ հաղորդակցվել, բայց հիմա պահանջում եմ ավելին: Ծրագրի շրջանակներում, նախատեսում ու իրականացնում ենք տարաբնույթ հետաքրքիր միջոցառումներ: Ահավասիկ, դրանցից մեկն էլ հայ-վրացական գրական-մշակութային հարաբերություններն ամրապնդող այս միջացառումն է: Այս միջոցառման նպատակը ոչ միայն հայ եւ վրաց գրողների ստեղծագործություններին ծանոթացնելն էր, այլեւ գրողների միջեւ եղած բարեկամության վերհիշումը,- մեզ հետ զրույցում ասաց Իամզե Մսխվիլիձեն:

ԻՆՏԵԳՐՈՒՄ

ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ, ԱՆԿԱԽ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ, ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ ԵՆ...»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Մեր երկրի համար կենսականորեն նշանակալից է, որ մեր բոլոր համաքաղաքացիներն ընկալեն այս քաղաքականության իմաստը, որ այս քաղաքականության բարի հետեւանքներն արտացոլվեն մեր համաքաղաքացիների կենսաձեւի վրա եւ մեծ օգուտ բերեն: Երբ մենք խոսում ենք եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման նշանակության մասին, բնականաբար, առաջին հերթին, նկատի ունենք առաջիկա հեռանկարները: Եվրահինտեգրումը նշանակալի ուղի է, որով ընթանում է մեր երկիրը, իսկ դա նշանակում է, որ մարդկանց կենսաձեւը պետք է բարելավվի, պետք է ունենա առավել լավ կրթություն, առողջապահություն, տնտեսական առավել մեծ հնարավորություններ, ավելի շատ ժողովրդավարություն, ինստիտուցիոնալ տարածք,- ընդգծեց հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարը:

Քեթեւան Ցիխելաշվիլին ուշադրությունը բեւեռեց մարդու իրավունքների պաշտպանության եւ իրավահավասարության սկզբունքների նշանակության վրա:

- Եվրոպական մոդելի պետությունն այնպիսի պետություն է, որտեղ բոլոր քաղաքացիները, անկախ ազգային եւ կրոնական պատկանելության, իրավահավասար են ինչպես օրենքի առջեւ, այնպես էլ՝ հնարավորությունների տեսանկյունից,- ասաց Քեթեւան Ցիխելաշվիլին:

Հանդիպմանը պետնախարարը խոսեց նաեւ քաղաքացիական ինտեգրման եւ իրավահավասարության պետության ռազմավարության ուղղությունների ու նշանակության մասին:

Հնարավորությունների ընդլայնման եւ իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագիրը «Բազմազգ Վրաստանը» իրականացնում է Վրաստանում Լիտվայի դեսպանության ֆինանսավորմամբ: Ծրագրի նպատակը Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի բնակչությանը տեղեկատվության փոխանցումն է հետեւյալ թեմաների շուրջ՝ Ասոցիացման պայմանագրի եւ խոր ու համընդգրկուն առեւտրի ազատ գոտու մասին, դրա արդյունքներն ու ձեռքբերումները, Վրաստանի գործարարների համար Եվրամիության շուկա մուտք գործելու կարգն ու պարտավորությունները, ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման իմաստը, արդյունքներն ու ձեռքբերումները:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԻՄԱՆԱԼԸ ՉԻ ԽԱՆԳԱՐԻ

ՍՊԻՏԱԿՈՒՑԻ՞, ԹԵ՞ ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱԿԱՍ

Վերջերս մի հոդվածում կարդայի, որ սպիտակուցները մեր օրգանիզմի կենսագործունեության հիմքն են, ուստիեւ ծախսած սպիտակուցների վերականգնումը կենսական նշանակություն ունի: Գուցե ավելի հստակ պարզաբանեք՝ դա ի՞նչ է նշանակում:

Ա. Մելիքյան

Թբիլիսի

Սպիտակուցի բաղադրության մեջ մտնում են ազոտ, թթվածին, ջրածին, ածխածին եւ քիմիական այլ տարրեր: Դրանք բոլորն էլ այս կամ այն չափով կան մթնոլորտի կազմում՝ 79 տոկոս ազոտ, 21 տոկոս թթվածին, չնչին քանակությամբ ածխաթթու գազ, նեոն, հելիում, մեթան եւ այլ գազեր:

Ազոտը սպիտակուցների բաղադրության զգալի մասն է կազմում, իսկ սպիտակուցները մեր օրգանիզմի կենսագործունեության հիմքն են, նրանք մասնակցում են հյուսվածքների, բջիջների, ֆերմենտների, հորմոնների, շնչառական պիգմենտների ստեղծմանը:

Նշենք, որ երկար ժամանակ իշխել է այն կարծիքը, թե բույսերն ու կենդանիները մթնոլորտի ազատ ազոտը յուրացնել չեն կարողանում, որ այդպիսի ունակությամբ օժտված են միայն մանրէների որոշ տեսակներ, որոնք գոյություն ունեն հողի մեջ, եւ նրանք ազոտը վերածում են բուսական սպիտակուցի, իսկ բուսակեր կենդանիներն էլ բուսական սպիտակուցները վերածում են կենդանական սպիտակուցների: Հետազոտությունները հաստատել են, որ բույսերի կանաչ զանգվածի 9/10 մասն ստեղծվում է արեւի էներգիայի ու մթնոլորտային գազերի, այդ թվում՝ նաեւ ազոտի հաշվին:

Առանձին հետազոտությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեր օրգանիզմը, ծախսված սպիտակուցների փոխարեն, սպիտակուցներ է սինթեզում մթնոլորտի ազոտից:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԻՆՉՊԵՍ ՏՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԻՋԵՑՆԵԼ ԱՐՅԱՆ ՃՆՇՈՒՄԸ

Արյան բարձր ճնշմամբ տառապում են ոչ միայն տարեցները, այլեւ երիտասարդները:

Թվում է, թե միակ ճիշտ լուծումը դեղամիջոցներն են, բայց չպետք է մոռանալ, որ դեղերը կարող են նպաստել քաղցկեղի եւ այլ լուրջ հիվանդությունների առաջացմանը: Պետք չէ խուճապի մատնվել, քանի որ մեզ օգնության են հասնում այն հրաշք տնական միջոցները, որոնք արագ իջեցնում են արյան ճնշումը եւ ոչ մի վատ հետեւանք չեն թողնում մեր առողջության վրա:

Նուշ: Ամեն օր օգտագործելով մի բուռ նուշ, կարող ենք հավասարակշռել արյան ճնշման մակարդակը: Նուշը պարունակում է չհագեցված ճարպեր, որոնք նվազեցնում են արյան մեջ խոլեստերինի քանակը, մեղմացնում աթերոսկլերոզը եւ իջեցնում արյան ճնշումը: Ավելի լավ արդյունք ստանալու համար, ցանկալի է նուշն օգտագործել ընկույզի հետ, քանի որ վերջինս նույնպես համարվում է արյան ճնշումը իջեցնելու արդյունավետ միջոց:

Կարմիր կծու պղպեղ: Կարմիր կծու պղպեղն արյան անոթները լայնացնում է, որի հետեւանքով, կարգավորվում է արյան շրջանառությունը: Մեկ կամ երկու թեյի գդալ աղացած կարմիր կծու պղպեղն ավելացնելով եռացրած ջրին՝ ստանում ենք տնական դեղամիջոց, որն օգնում է արագ կարգավորել արյան ճնշումը:

Կակաո: Կակաոն հարուստ է ֆլավոնոիդներով, հակաբորբոքային նյութերով, որոնց շնորհիվ արյան ճնշումը կարգավորվում է: Կակաոն հզոր զենք է արյան բարձր ճնշման դեմ: Արյան բարձր ճնշումն անմիջական կապ ունի «սթրես» հասկացության հետ, իսկ կակաոյի ֆլավոնոիդները ոչ միայն օգնում են օրգանիզմին ավելի հեշտ դիմակայել սթրեսին, այլեւ կարգավորում են սթրեսի հորմոնի քանակը մեր օրգանիզմում: Կակաոյի ֆլավոնոիդները պաշտպանում են օրգանիզմը կաթվածից եւ սրտի ինֆարկտից:

Քրքում (զաֆրան): Արյան մեջ խոլեստերինի բարձր քանակը եւ արյան բարձր ճնշումը մեր օրգանիզմում առաջ են բերում բորբոքային պրոցեսներ, որոնց դեմ կարող է պայքարել քրքումը: Օրգանիզմում բորբոքային պրոցեսները նվազեցնելով՝ քրքումն օգնում է կարգավորել սրտանոթային ֆունկցիան եւ արյան շրջանառությունը: Քրքումը նաեւ ամրացնում է արյան անոթների պատերը, մաքրում դրանք ավելորդ մնացորդներից ու խցանումներից:

Սխտոր: Մանրէների թշնամի համարվող սխտորը հզորագույն միջոց է արյան բարձր ճնշման դեմ: Սխտորը բնականոն կերպով նվազեցնում է արյան մեջ խոլեստերինի քանակը եւ իջեցնում բարձր ճնշումը: Եթե Ամերիկայում մարդիկ նախընտրում են սխտորն օգտագործել հաբերի տեսքով, ապա Հայաստանում, ավելորդ ծախսերից խուսափելու համար, այն օգտագործում են նրա իսկ բնական տեսքով:

ՀԵՌԱՆԿԱՐ

ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ՃԻՇՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիք չէ, որ մասնագիտության ընտրությունը մարդկանց կյանքի ամենակարեւոր խնդիրներից մեկն է: Իրականում աշխարհի ոչ մի այլ երկրում չկա այնքան ուսանող, որքան Հայաստանում կամ Վրաստանում, սակայն կարող եք համոզված լինել, որ Հայաստանում կամ Վրաստանում չկան նույնքան կիրթ ու բանիմաց մասնագետներ, որքան՝ այլ երկրներում: Պատճառները շատ են: Կարծում ենք, որ պատճառներից մեկը սխալ մասնագիտության ընտրությունն է:

Մասնագիտություն ընտրելիս՝ երբ հաճախ դժվարանում ենք. չկողմնորոշվելով, թե իրականում ո՞րն է առավել հարկավոր մեզ, հաճախ օգնության են հասնում ծնողները, եւ դա ունենում է իր դրական ու բացասական կողմը: Օրինակ՝ իմ դեպքում, մասնագիտություն ընտրելիս, օգնել են ծնողներս:



Եթե չես սիրում կարդալ, եւ սովորելը քոնը չէ, ապա զուր ժամանակ մի վատնիր՝ ընդունվելով բուհ, որ ընկերներիցդ ետ չմնաս, փոխարենը փորձիր մեկ այլ բնագավառում քեզ պատկերացնել. մտածիր, թե ի՞նչ ես ուզում, ո՞ր աշխատանքում ես քեզ լավ մասնագետ պատկերացնում: Գուցե սովորել չես սիրում, բայց ձեռքի շնո՞րհք ունես:

Որոշեք, թե ի՞նչ ոլորտում կցանկանայիք աշխատել, համապատասխան՝ ձեր հետաքրքրություններին: Օրինակ, եթե դուք նախընտրում եք հանգիստ կյանք վարել, ապա գրասենյակային աշխատանքը հենց ձեզ համար է:

Եթե չսիրեք ձեր մասնագիտությունը, երբեք այդ բնագավառում չեք կարող հասնել հաջողության, քանի որ, եթե չկա անձնական շահագրգռվածություն, աշխատանքը երբեք լրիվությամբ չի կատարվի:

Որոշեք, թե ինչն է ձեզ մոտ ավելի լավ ստացվում: Ձեր ընդունակությունները ճանաչելու շնորհիվ, կարող եք հասկանալ՝ ո՞ր բնագավառում կարող եք հետագայում աշխատել: Օրինակ՝ եթե ձեզ մոտ զարգացած է բանավոր հաղորդակցությունը, դուք ազատ կարողանում եք արտահայտել ձեր մտքերն ու, ամենակարեւորը, կարողանում եք համոզել դիմացինին, ապա ձեզ հարմար կլինի՝ որպես ապագա մասնագիտություն, ընտրել լրագրությունը:

Ազնվորեն գնահատեք ձեզ տվյալ մասնագիտության համար, արդյոք դա ձեզ համապատասխանո՞ւմ է, թե՞ ոչ: Կարեւոր է՝ նաեւ հաշվի առնել ձեր գիտելիքների մակարդակը: Գուցե հետազոտություն կատարելիս՝ ձեզ գրավել է բժշկությո՞ւնը, սակայն դուք կենսաբանությունից բավարար գիտելիքներ չունեք: Այս դեպքում, կա երկու տարբերակ՝ կամ պետք է փոխել ընտրված մասնագիտությունը՝ ընտրելով որեւէ բան ձեր գիտելիքներին համապատասխան, կամ էլ ձեր մեջ կամքի ուժ գտնեք եւ, լրացնելով գիտելիքների բացը, հասնեք ձեր նպատակին:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
(1869-1923)
Հայ բանաստեղծ

Դու չես կարող անել ոչինչ, թե չժպտաց աստղդ վերից, Ինչ ուզում եմ, չունեմ ես այն, ինչ չեմ ուզում, տրված է ինձ...

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց բանաստեղծ

Ով չի պատկանում իր հայրենիքին, նա չի պատկանում նաեւ մարդկությանը:

Վ.ԲԵԼԻՆՍԿԻ
(1811-1848)
Ռուս քննադատ

Միապետության ժամանակ արդարադատությունը բխում է թագավորից: Հանրապետության ժամանակ այն պետք է բխի ժողովրդից:

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ
(1802-1885)
Ֆրանսիացի գրող

Քաղաքացիների համար առավել օգտակար է, երբ պետությունը ծաղկում է ամբողջությամբ, այլ ոչ թե, երբ առանձին մարդիկ բարգավաճում են, իսկ ամբողջը քայքայվում:

ԹՈՒԿԻԴԻԴԵՍ
(մ.թ.ա. 460-400)
Հին հույն պատմիչ



Նա, ով ամեն ինչ թողնում է պատահմունքի քմահաճույքին, իր կյանքը դարձնում է վիճակախաղ:

ՍԵՐՎԱՆՏԵՍ
(1547-1616)
Իսպանացի գրող

Գրքերը լավագույն բարեկամներն են: Նրանց կարելի է դիմել կյանքի բոլոր դժվարին պահերին, նրանք երբեք չեն դավաճանում:

ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ
(1452-1519)
Իտալացի գեղանկարիչ

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ Երկու ընկերուհի զրուցում են:

- Իմ ամուսինը ամեն օր տանից դուրս ա գալիս գիշերվա տասին ու տուն ա գալիս գիշերվա հինգին: Արդեն ներվայնանում եմ:

- Հա՞, ամոթ էլ ա: Ընդհանրապես, ի՞նչ ա աշխատում քո ամուսինը:

- Գիշերային պահակ...

☺ Երկու երիտասարդ մայրեր զրուցում են իրենց երեխաների մասին:

- Չէ', իմ Արմենչիկը ինձ բոլորովին չի չարչարում,- ասում է մեկը,- հենց սկսում է ճչալ, ես նրա համար օրորոցային եմ երգում...

- Առաջ ես էլ էի այդպես անում, բայց հարեւաններն ասացին՝ Սոնա', ավելի լավ է թող նա ճչա...

☺ 3-4 տարեկան 2 եղբայրներ կռիվ են անում , փոքրը մեծին ասում ա.

- Էշի տղա:

Մաման էլ ջղայնացած, թե՝

- Բալե'ս, չի կարելի, բա քո մաման-պապան է՞շ են, որ ըտենց բաներ ես ասում:

Երեխան էլ ասում ա՝ էշ են, բա ի՞նչ են:

☺ Ամուսինը նայում է հեռախոսավճարի տեղեկանքն ու հարցնում կնոջը.

- Էդ ու՞մ հետ ես այդքան հաճախ Վրաստան խոսել...

- Ոչ մեկի, դու չգիտե՞ս, որ հեռախոսով միայն մայրիկիս հետ եմ խոսում:

- Ուզում ես ասել, որ մայրդ այնքան է չաղացել, որ էլ Հայաստանում չի տեղավորվո՞ւմ...

☺ Մի 90 տարեկան պապիկ գալիս ա տերտերի մոտ ու պատմում.

- Տեր հայր, ես 90 տարեկան եմ, իսկ կինս՝ 20: Ամեն երեկո ես աղոթում էի աստծուն, ու հիմա կինս հղի է:

Տերտերը պատասխանում ա.

- Որդյակ իմ, մի անգամ անտառում զբոսնելիս՝ ինձ վրա հարձակվեց արջը: Մոտս միայն ձեռնափայտս էր: Ես էլ ուղղեցի ձեռնափայտս դեպի արջը ու տվեցի աստծու անունը: Լսվեց կրակոց, ու արջը սատկած փռվեց ոտքերիս տակ:

- Փաստորեն, հրաշքներ լինում են:

- Որդյակ իմ, շրջվեցի ու տեսա, որ հետեւումս որսորդ էր կանգնած՝ իսկական հրացանով:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԾ «ԱՍՏԱՆԱ ԷՔՍՊՈ 2017» ՅՈՒՅՆԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՄԱՆԸ

Հունիսի 9-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, աշխատանքային այցով, մեկնեց Ղազախստան՝ մասնակցելու «Աստանա էքսպո 2017» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսի բացմանը: Ցուցասրահում Հայաստանի նախագահին դիմավորեց Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը:

Ցուցահանդեսին Հայաստանը հանդես է գալիս առանձին տաղավարով: Հավաքական տաղավարը կոչվում է «Մետաքսի ճանապարհ»:

Հայկական տաղավարը գտնվում է հսկա ցուցահանդեսային համալիրի 411-րդ հատվածում՝ «Մետաքսի ճանապարհ» խորագրի ներքո: Աստանայի ցուցահանդեսն առաջինն է, որն անցկացվում է ԱՊՀ մասնակից պետություններից մեկում: Ցուցահանդեսը կտեւի 3 ամիս՝ հունիսի 10-ից սեպտեմբերի 10-ը: Իրենց մասնակցությունն են հաստատել 115 պետություններ եւ 18 միջազգային կազմակերպություններ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ժողովականների ուշադրությանը հանձնվեց Ազգային-եկեղեցական ժողովի 1945թ. կանոնադրության փոփոխությունների լրամշակված նախագիծը:

Ժողովին նաեւ անդրադարձ կատարվեց թեմերում թեմական ուղենիշային կանոնադրության ներդրման գործընթացի արդյունքներին:

Եկեղեցական-ներկայացուցչական ժողովին ամփոփ տեղեկություններ հաղորդվեցին Երուսաղեմի եւ Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունների, թեմերի եւ Հայրապետական պատվիրակությունների ընթացիկ գործունեության մասին:

Ժողովն ամփոփվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ 328 ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԱՎՈՐՄԱՄԲ ԿՁԵՎԱՎՈՐՎԻ 34 ՀԱՄԱՅՆՔ

Համայնքների խոշորացման նոր ծրագրով Հայաստանի տարբեր մարզերի 328 համայնքներ կմիավորվեն, ինչի արդյունքում կձեւավորվի 34 համայնք: Ազգային ժողովը քննարկում է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Հիմնական զեկուցող, ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանն ընդգծեց, որ, օրենքի նախագծի համաձայն, նախատեսվում է իրականացնել համայնքների խոշորացման 34 ծրագիր՝ Արագածոտնի մարզի Ապարան, Ալագյազ, Արագածավան, Ծաղկահովիտ, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Վարդենիս, Մասրիկ, Շողակաթ, Լոռու մարզի Ալավերդի, Ստեփանավան, Ախթալա, Սարչապետ, Տաշիր, Օձուն, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Մեծավան, Շնող, Կոտայքի մարզի Բյուրեղավան, Եղվարդ, Չարենցավան, Ակունք, Մեղրաձոր, Ջրվեժ, Շիրակի մարզի Անի, Ախուրյան, Մարմաշեն, Սյունիքի մարզի Կապան, Սիսիան, Քաջարան, Վայոց ձորի մարզի Արենի, Գլաձոր, Եղեգիս, Տավուշի մարզի Բերդ համայնքային փնջերում:

Նշվեց որ փոփոխություններ են նախատեսվում նաեւ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի օրենքում:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հայաստանի սփյուռքի նախարարությունում, նախարարի տեղակալ Սերժ Սրապիոնյանի գլխավորությամբ, տեղի է ունեցել լրագրողների համահայկական համաժողովները համակարգող մարմնի հերթական նիստը, որը վարել է «Ազդակ» (Լիբանան) օրաթերթի գլխավոր խմբագիր, Լրագրողների համահայկական համաժողովները համակարգող մարմնի նախագահ Շահան Գանտահարյանը:

Նիստին մասնակցել են Լրատվամիջոցների համահայկական ընկերակցության նախագահ Տիգրան Հարությունյանը, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Նաղաշ Մարտիրոսյանը, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոս, «Հայկական ՓիԱր ասոցիացա» ՀԿ-ի նախագահ Աստղիկ Ավետիսյանը, նախարարության աշխատակիցներ:

Նիստին հեռակապով միացել են «Օրեր» ամսագրի գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանը (Չեխիա), «Զարթոնք» օրաթերթի գլխավոր խմբագիր Սեւակ Հակոբյանը (Լիբանան), «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր Դերենիկ Մելիքյանը (Իրան), «Հորիզոն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Վահագն Գարագաշյանը (Կանադա), «Ноев ковчег» համառուսաստանյան հայկական ամսաթերթի գլխավոր խմբագիր Գրիգոր Անիսոնյանը, «Արմենիա» օրաթերթի գլխավոր խմբագիր Գեւորգ-Ռուբեն Գազանճյանը (Արգենտինա):

Ներկաները քննարկել են 2017 թվականի սեպտեմբերի 18-20-ը կայանալիք Հայրենիք-Սփյուռք Համահայկական 6-րդ համաժողովի լուսաբանման հետ կապված մի շարք հարցեր: Մասնակիցներն անդրադարձել են նաեւ Հայրենիք-Սփյուռք Համահայկական 6-րդ համաժողովին օտար լրատվամիջոցներում աշխատող հայազգի լրագրողների մասնակցության խնդրին:

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 8-ին Գենդերային հիմքով բռնությունը հակամարտությունների ժամանակ, Ընտանեկան բռնություն, Կանանց իրավունքների խախտումներ. «Դեմոկրատիան այսօր» հասարակական կազմակերպությունն անցկացրեց «Կանայք հանուն խաղաղության եւ կայունության» համաժողովը:

«Խաղաղությունն սկսվում է քո տնից» խորագրով 5-րդ միջազգային համաժողովը, որին մասնակցելու նպատակով Հայաստան էին ժամանել տարբեր երկրների (Սիրիա, Կոլումբիա, Իրաք, Կիպրոս, Խորվաթիա, Սերբիա, Չեչնիա, Վրաստան, Ուկրաինա, Ռուսաստան, ԱՄՆ եւ այլն) ներկայացուցիչներ:

Միջոցառմանը հանդես եկավ Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին՝ ընդգծելով, որ խաղաղության տանող ուղին եւ բռնությունների բացառումն անցնում են կանանց հզորացման ճանապարհով:

Համաժողովին մասնակցում էր նաեւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիեն:

Հունիսի 7-ին «Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Երիտասարդ կանանց խաղաղության եւ մարդու իրավունքների» 6-րդ միջազգային մրցանակաբաշխության դափնեկիր դարձան Իրաքը ներկայացնող «Բաղդադի կանանց ասոցիացիայի» խորհրդի անդամ Բարվին Մոհամմեդ Ամինը՝ Իրաքում խաղաղաշինության եւ հաշտեցման գործընթացներում կնոջ դերի բարձրացման համար ու Կոլումբիան ներկայացնող «Կանանց միջազգային լիգա հանուն խաղաղության եւ ազատության» միջազգային ՀԿ նախագահ Քաթերին Ռոնդերոսը, ով մշակում է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1325 եւ 1820 բանաձեւերի իրականացման ծրագիրը՝ աշխատելով զինված հակամարտության պատճառով տուժած կանանց հետ Կոլումբիայի հինգ շրջաններում:

ԱՎԵԼԱՑԵԼ Է ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Հայաստանի պետական պարտքը, մայիսի վերջի դրությամբ, կազմել է 6 մլրդ 95 մլն ԱՄՆ դոլար: Ապրիլին պետական պարտքը կազմել էր 6 մլրդ 38,7 մլն ԱՄՆ դոլար: Ինչպես պարզ է դառնում տվյալներից, պետական պարտքի յուցանիշն ավելացել է 56,3 մլն դոլարով:

Հայաստանի պետական պարտքում երկրի կառավարության պարտքը կազմում է 5 մլրդ 544,1 մլն դոլար, որը, ապրիլի համեմատ, ավելացել է 28,5 մլն ԱՄՆ դոլարով: Հայաստանի կենտրոնական բանկի պարտքը կազմել է 550,9 մլն դոլար, որն ավելացել է 27,8 մլն դոլարով:

Արտաքին պարտքը մայիսին կազմել է 4 մլրդ 373,5 մլն, իսկ ապրիլին՝ 4 մլրդ 330,6 մլն ԱՄՆ դոլար: Այն մայիսին ավելացել է 42,9 մլն ԱՄՆ դոլարով:

Ներքին պարտքը մայիսին կազմել է 1 մլրդ 170,6 մլն դոլար: Ապրիլին այն կազմում էր 1 մլրդ 185 մլն դոլար: Մայիսին ներքին պարտքը, ապրիլի համեմատ, նվազել է 14,4 մլն դոլարով: Հայաստանի ռեզիդենտների կողմից յեռք բերված պետական գանձապետական պարտատոմսերը մայիսին կազմել են 1 մլրդ 40,3 մլն դոլար, որը, ապրիլի համեմատ, նվազել է 14,4 մլն դոլարով: Իսկ Հայաստանի ռեզիդենտների կողմից յեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերը մայիսին կազմել են 121,3 մլն դոլար, որը, ապրիլի նկատմամբ, անփոփոխ է մնացել:

ՆՎԱԶԵԼ ԵՆ ՍԵՆԵԳԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԵՐԸ

Հայաստանում 2017 թվականի մայիսին, ապրիլի համեմատ, արձանագրվել է սննդամթերքի 0,8% գնանկում, ինչը հիմնականում բանջարեղենի, կաթնամթերքի, պանրի եւ յվի, մրգի ապրանքախմբերի՝ 5,3-0,5% գնանկման արդյունք է: Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների, բանջարեղենի ապրանքախմբում 2017թ. մայիսին, 2016թ. մայիսի համեմատ, արձանագրվել է 3,4% գնաճ, իսկ 2017թ. ապրիլի համեմատ՝ 5,3% գնանկում: Դիտարկված 10 քաղաքներում 2017թ. մայիսին, ապրիլի համեմատ, բանջարեղենի գները նվազել են 12,0-1,3%-ով, իսկ մեկում գրանցվել է 0,7% գնաճ: Մայրաքաղաքում բանջարեղենի գների ընդհանուր մակարդակը, նախորդ ամսվա համեմատ, նվազել է 4,4%-ով:

Կաթնամթերքի, պանրի եւ յվի ապրանքախմբում 2017թ. մայիսին, 2016թ. մայիսի համեմատ, արձանագրվել է 0,7% գնաճ, իսկ 2017թ. ապրիլի համեմատ՝ 0,6% գնանկում, ընդորում, յվի գնանկումը կազմել է 1,1%:

Մրգի ապրանքախմբում 2017թ. մայիսին, 2016թ. մայիսի համեմատ, արձանագրվել է 17,5% գնաճ, իսկ 2017թ. ապրիլի համեմատ՝ 0,5% գնանկում:

ՓՈԹՈՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի ողջ տարածքում, հունիսի 6-ին գրանցված ուժեղ քամու հետեւանքով, վնասվել են տանիքներ, շրջվել են ծառեր: Երեւանում տեղի ունեցած փոթորկի հետեւանքով, հունիսի 6-ին մահացել է 63-ամյա Բաղդասար Չարկիչյանը: Շենքի տանիքներից մեկից թիթեղներ են պոկվել եւ ընկել նրա վրա: Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը յեռնամուխ է եղել փոթորկի հետեւանքների վերացման աշխատանքներին:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(9 հունիսի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	481,20	483,80
ԵՎՐՈ	537,00	543,00
ՌՈՒԲԼԻ	8,35	8,54

Հունիսի 2-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը ավելացել է 1,5 դրամով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆԻՍ

11.06.2017. Սուրբ Եղիա մարգարեի հիշատակության օր

12.06.2017. Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակության օր

13.06.2017. Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակության օր

ՏԱՐԵՐՔ

ԵՐԿՐԱՇԱՐԺ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Սեյսմիկ պաշտպանության ծառայության սեյսմոլոգիական ցանցի կողմից հունիսի 7-ին, տեղական ժամանակով ժամը 22:25-ին, գրանցվել է հյուսիսային լայնության 41.370 եւ արեւելյան երկայնության 45.760 աշխարհագրական կոորդինատներով, Վրաստանում՝ Թբիլիսիից 90 կմ արեւելք, Սիղնաղի քաղաքից 22 կմ հեռավորության վրա, 5,1 մագնիտուդով երկրաշարժ:

Ստորերկրյա ցնցումները զգացվել են Վրաստանի գրեթե բոլոր տարածաշրջաններում, ինչպես նաեւ Հայաստանի Վանաձոր, Նոյեմբերյան, Իջեւան եւ Երեւան քաղաքներում:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱՉԱՓԻՉՆԵՐ՝ ԱՐԴԵՆ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ

Առաջիկա ամիսներին Վրաստանի մունիցիպալային բոլոր ճանապարհներին ու ավտոմայրուղիներին կտեղադրվեն արագաչափեր՝ ռադարներ: Այս մասին լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի նախագահ Գիորգի Սեթուրիձեն:

Նրա խոսքով, սույն համակարգը կօգնի, որպեսզի համապատասխան գերատեսչությունը հայտնաբերի ճանապարհային երթեւեկությունը խախտողներին:

- Դեռեւս անցյալ տարի կառավարությունը ընդունել էր այդ որոշումը եւ առաջիկա ամիսներին կսկսվի աննախադեպ արագաչափերի համակարգի տեղադրումը: Դա կիրականացվի երկրի ողջ մասշտաբով, այդ թվում՝ մունիցիպալային ճանապարհների վրա, բնակավայրերում, այն վայրերում, որտեղ հաճախ ավտովթարներ են լինում: Դա թույլ կտա հայտնաբերել այն անձանց, ովքեր չեն պահպանում ճանապարհային երթեւեկության կանոնները, ինչը հաճախ ողբերգական հետեւանքների է հանգեցնում,- հայտարարեց Գիորգի Սեթուրիձեն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ

«ՄԻՍՍ ԱՊՀ»-Ն ՀԱՅՈՒՀԻ Է

«Միսս ԱՊՀ» միջազգային գեղեցկության մրցույթում հաղթող է ճանաչվել Հայաստանի ներկայացուցիչը. «Գրան-պրի» մրցանակին արժանացել է Շուշան Երիցյանը:

Մրցույթին մասնակցել են 18-25 տարեկան 24 գեղեցկուհիներ, ովքեր հաղթել են իրենց երկրներում անցկացված նախընտրական փուլում: Նրանք, մրցույթին մասնակցելու նպատակով, Հայաստան էին ժամանել օրեր առաջ:

ՍՊՈՐՏ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ Է ԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Եզրագծին է մոտենում Վրաստանի երկու քաղաքներում՝ Թբիլիսիում եւ Քութայիսիում անցկացվող ռեգբիի՝ մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնության մրցաշարը: Հիշեցնենք, որ մրցաշարին մասնակցում են 12 թիմեր, որոնք բաժանված են երեք խմբերի:

Խմբային մրցաշարում անհաջող հանդես եկավ Վրաստանի հավաքականը: Մեր հավաքականը բոլոր երեք խաղերում պարտություն կրեց եւ ներկայումս իններորդ տեղի համար հունիսի 13-ին իր ուժերը կչափի Արգենտինայի հավաքականի հետ: Իններից 12-րդ հորիզոնականներում տեղ զբաղեցնելու համար, կպայքարեն նաեւ Իռլանդիայի եւ Սամուայի թիմերը: Հինգերորդ տեղի համար հունիսի 13-ին կպայքարեն Ավստրալիա-Իտալիա, Շոտլանդիա-Ուելս հավաքականները: Հունիսի 14-ին կանցկացվեն մրցաշարի կիսաեզրափակիչ հանդիպումները՝ Նոր Զելանդիա-Ֆրանսիա եւ Անգլիա-Հարավային Աֆրիկա թիմերի միջեւ: Հունիսի 18-ին կանցկացվեն երրորդ տեղի եւ աշխարհի չեմպիոնի կոչման համար հանդիպումները:

ՀԱՅ ՄԱՐԶՈՒՀԻՆԵՐԻ ՈՍԿԵ ՄԵԴԱԼՆԵՐԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Վրաստանում եզրագիծը հատեց երկրի թեթեւ ատլետիկայի բաց առաջնությունը, որին, տանտերերից բացի, մասնակցում էին Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի եւ Ուկրաինայի մարզիկները:

Հայաստանի հավաքականի անդամ Լիլիթ Հարությունյանը (նա նաեւ 31-րդ ամառային Օլիմպիական խաղերի մասնակից էր) եւ էլլադա Ալավերդյանը հաջող են մասնակցել այս տարվա Վրաստանի բաց առաջնությանը:

Լիլիթ Հարությունյանը ոսկե մեդալի արժանացավ 400 մետր, իսկ էլլադա Ալավերդյանը՝ 1500 մետր վազքատարածքում:

Թիմային հաշվարկում առաջին տեղը զբաղեցրեց Վրաստանի հավաքականը: Երկրորդ եւ երրորդ տեղերում էին Հայաստանի եւ Ուկրաինայի թիմերը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Խորհրդային կինոռեժիսոր ... Ռյազանով: 4.Ե՛ւ ծաղիկ, ե՛ւ իգական անուն: 10.Պետություն Եվրոպայում: 12.Մարդու ներքին օրգան: 14.Ցուցական դերանուն: 15.Քիմիական 11-րդ տարրը Մենդելեեւի մոտ: 18.Փող, գումար: 19.Հայ դիցուհի: 20.Դաղձ, անանուխ: 23.Աղոթքի վերջում: 25.Վրացական ֆիլմ: 27.Դերասան ... Դեղտրիկյան: 29.Քաղաք Իտալիայում: 31.Մասիս, Սիփան, Աբուլ: 33.Հայկական ֆիլմ: 34.Ռազմի աստվածը, Զեւսի եւ Հերայի որդին: 36.Ուկրաինացի երգչուհի Սոֆիա ...: 38.Պետություն Աֆրիկայում: 39.... մշակներ (գրողներ, բանաստեղծներ, թարգմանիչներ): 40.Կատարի մայրաքաղաքը: 42.Վրաց դերասանուհի ... Վաչնաձե: 44.Պետություն Ասիայում: 45.Ամերիկահայ բանաստեղծուհի ... Վան: 47.Կղզի Մալայան արշիպելագում: 48.Հացահատիկի, ալյուրի կամ այլ մթերքների համար կտորից կարված հարմարանք: 49.Երասան, սանձաթոկ, լկամ: 52.«... այս գիշեր արթուն մնանք» (ժող. երգ): 54.Քաղաք Լեհաստանում: 56.Մոլդովայի դրամական միավորը: 58.Երգչուհի ... Մկրտչյան: 59.Թատրոն Երեւանում: 60.Քաղաք Վրաստանում: 61.Վրաց գրող ... Դումբաձե: 62.«... թագուհին» (Ալ.Դյումա):

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.«..., որդիս, պատգամ որպես, սիրող քո մոր խոսքը սրտանց» (Ս.Կապուտիկյան): 3....ատու, ...ել, ...ներ: 4.Դ.Վարուժանի «... արտ» բանաստեղծությունը: 5.Ժխտական նախածանց: 6.Պատմական Կիլիկիայի մայրաքաղաքը: 7.Խորհրդահայ գրող ... Շահինյան: 8.Հովհ.Թումանյանի հեքիաթներից՝ «... աղջիկը»: 9.Բազիլիկ, շահասպրամ: 11.Հայ բանաստեղծ, Խորհրդային Հայաստանի հիմնի հեղինակ (կեղծանունը): 13.«Աղջի ..., յարիդ տարան» (ժող. երգ): 16.Սեղանի խաղ: 17.Թուրքիայում հրատարակվող պարբերական, որի մեկ էջը հայերեն է: 21.Նահանգ ԱՄՆ-ում: 22.Ամերիկահայ երգչուհի Լուսին ...: 24.Անձնական դերանուն: 26.Անամոթ, անպատիվ: 28.Խոսքի մաս: 30.Լատվիայի դրամական միավորը: 31.Ամերիկյան դերասանուհի ... Բուլլոք: 32.Մեսրոպյան այբուբենի տառ: 35.Անարգ, ցածրոգի: 37.Արեգակնային համակարգի մոլորակ: 38.Մաշտոցյան այբուբենի երրորդ զինվորը: 40.Ամերիկացի դերասան Կամերոն ...: 41.Գերմանացի բանաստեղծ: 43.... մեդալի հավակնորդ: 46.Ֆրանսիացի գրող, արմատներով հայ ... Թրուայա: 47.Վրաց կինոռեժիսոր Լեւան Եղոնիայի հայրը, «Վրացֆիլմ» կինոստուդիայի նախկին փոխտնօրենը: 48.14-րդ դարի հայ մանրանկարիչ Սարգիս ...: 50.Աղացած ցորեն: 51.Արեւելյան մարզաձեւ: 53.«Զարկեցեք, դարբիններ, ...ը սալին» (Հ.Հովհաննիսյանի «Արտավազդ»): 55.Վարժություն սպորտասպարեզում: 57.Քաղաք Մեծ Բրիտանիայում:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Տիխոնով: 9.Ոլորտ: 10.Ֆիլմ: 11.Դեկոլտե: 13.Սիմոն: 16.Մեց: 17.Արտ: 19.Միլկի: 22.Սատար: 24.Տաթեւիկ: 25.Բալի: 27.Մարաբու: 29.Բեռնար: 32.Ավելի: 33.Լիտավր: 35.Չլուտ: 38.Ճոն: 40.Սիեռա: 41.Փշատ: 44.Աքոս: 47.Ուրո: 48.Սոյա: 50.Ատամն: 51.Հրո: 52.Ուս: 53.Ռաջ: 54.Չեմ: 55.Վերտ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Գիտեմ: 2.Քորոց: 3.Կոֆտա: 4.Հոմս: 5.Հողմ: 6.Ատեն: 8.Վիերի: 12.Կեղտ: 14.Իգիթ: 15.Ոսկի: 18.Կրաբ: 19.Մանել: 20.Լեւան: 21.Իկեր: 23.Աբական: 26.Լուար: 28.Ամիճ: 29.Բել: 30.Ռիչի: 31.Ապուր: 34.Տոյոտա: 36.Լելո: 37.Տապաստ: 39.Յար: 42.Շունչ: 43.Տոհմ: 45.Թառ: 46.Սաջ: 48.Սով: 49.Յուր:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445